

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՂԵՅԱՏԱՆՆԵԱՅՑ ԿՈՒԿԵԼԱԿՆ ԵԿԵՂԵՑԻ
 ՄԵՏԱԳՈՅՆ ԴԱՐԱՆ

HOLY TRINITY ARMENIAN APOSTOLIC CHURCH OF GREATER BOSTON

REV. FR. PAPKEN MAKSOUDIAN, Pastor
 145 BRATTLE STREET • CAMBRIDGE, MASSACHUSETTS 02138 • TEL: 354-0632

Փետրուար 10, 1971

Գերաշնորհ
 Տ. Թորգոմ Ս. Արքեպիսկոպոս
 Առաջնորդ Հայոց Ամերիկայի
 նիւ Եորք

Գերշ. Սրբազան Հայր,

Ս. Եկեղեցւոյ Տարեկան Միական Ժողովը գումարուեցաւ Յունուար 31, 1971, Կիրակի օր, կէսօրէ ետք ժամը 1.30ին, Մշակութային Սրահին մէջ, իմ նախագահութեամբս եւ 129 իրաւասու անդամներու ներկայութեան:

Օրուան ատենապետ ընտրուեցաւ Պ. Ճան Սուրսուրեան, Հայերէնի ատենապետ Պ. Միհրան Կօշկարեան եւ անգլերէնի ատենապետ Տիկ. Զապէլ Կիւլիսեան:

Բոլոր տեղեկագիրները ամփոփուած էին մէկ կողքի տակ, որմէ օրինակ մը կը ներփակեմ, ինչպէս նաեւ ժողովի հրաւիրագիր-օրակարգէն, ընտրութեան ցանկերէն եւ Առաջնորդարանէն մեզի ղրկուած հարցարանները՝ որոնց պատասխանուած է քաղելով տեղեկագիրներէն:

Միական Խորհուրդի անդամներու թիւը այս տարի, համաձայն անցեալ տարուան որոշման, 11էն բարձրացաւ 15ի:

Գաղտնի քուէարկութեամբ հետեւեալ ծխականները Միական Խորհուրդի անդամ ընտրուեցան, առաջին ութ անձերը երկու տարուան եւ վերջին երկուքը մէկ տարուան պաշտօնավարութեան համար. —

Արչի Խուլիկեան	117 քուէ	Գրիգոր Խաչատուրեան	78 քուէ
Փիթըր Կիւլիսեան	97	Ճան Տէնիլսըն	76
Տիրան Մաղիկեան	94	Թամ Ստեփանեան	73
Րիչըրտ Զէյթունճեան	90	Արթըր Փերեցեան	62
Արթըր Աբգարեան	89	Հէրբէրտ Զուլալեան	62

Ուստի կը խնդրեմ Ձերդ Սրբազնութենէն որ վաւերացնէք սոյն օրինաւոր ընտրութիւնը, որպէս զի կարենամ ժողովի հրաւիրել:

Մատչելով ի համբոյր Ս. Աշոյր
 Մնամ խոնարհ Աղօթակից
Բամբալե Ա. Քեյ. Մամյանյան
 Բաբգէն Ա. Քհնյ. Մագսուտեան
 Հոգեւոր Հովիւ
 Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ